



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 11 » օգոստոսի 2017 թվականի N: 84 ք.Գյումրի

ԱՇՈՏ ԿՈՒՐԴԻՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասի, 163-րդ հոդվածի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի դրույթներով և հիմք ընդունելով Աշոտ Կուրդինյանի 2017 թվականի օգոստոսի 8-ի դիմումը.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Աշոտ Կուրդինյանին տրամադրել ամենամյա նվազագույն արձակուրդից 10 աշխատանքային օր՝ 2017 թվականի օգոստոսի 14-ից 25-ը ներառյալ:
2. Աշոտ Կուրդինյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ընկերության ընդունարանի և ախտորոշիչ ծառայության վարիչ Հայկուշ Ավետիսյանին:

Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

